

րեանց բոլորչին նեղնալով հանդերձ, նաև կը նեղնայ իւրաքանչիւր աստիճանի լայնքն, այնպէս որ գազաթի մօտի աստիճանը մէկ մէթր լայնք ունի:

Գազաթն հարթ հաւասար դուրանցած է մէկ արտավար տարածութեամբ վայր, որ տեղ տեղ սրբատաշ քարերէ շինուածքներ կերելին մէկ խորանարդ մէթր քառակուսի քարերով:

Հանդէպ այս սանդուխներուն՝ 25 մէթր հեռաւորութեան վերայ բոլորչի բնական ժայռէն պարիսպ կոփուած է:

Մանազկերտէն Անդաբ գնալիք ուղղին բերդիս ստորտէն կանցնի, բերդս այս ճանապարհին հիւսիս արեւմտեան կողմն կկնայ:

Բերդի արեւմտեան հիւսիսային կողմն սալայատակուած է: 15 մէթրի չափ հեռին մի խանգարեալ մատուռ կը գտնուի, միայն հիմերն և բեմն լաւ կը նշմարուին, բեմն տակ պահարան մի կայ, ուր զետեղուած են հողէ ճրագներ, պահարանին ներսի ճակատը մարմարիոնէ խաչքար մի կայ: Մատուռիս դէպի հիւսիսային արեւմուտքը՝ 15 մէթր հեռին՝ քիչ բարձրութեան վերայ գոգաձև տափարակ մի կը պարզուի մեր աչքին, այս տեղ կան գերեզմանաքարեր խառնափնդոր վիճակի մէջ:

Այս գերեզմանատան կեդրոնը կը գտնուի մի սև սրբատաշ քար, երկայնութիւնը երկու մէթր՝ լայնքը մէկ մէթր, հողէ բարձր $1\frac{1}{2}$ մէթր, նաև չը զիտցուիք թէ որչափ հողին մէջ հորուած է, վերին երեսին վերայ դիր չկայ, իսկ չորս արտաքին երեսին վերայ ամբողջ սեպագրութիւն է:

Պօստան-Ղայայի այս քարէ բլուրի սանդխաձև